ուշ կ՝առնու մարդագլուխ։ Եւ միաբանեալ
ամենեքին՝ արք եւ կանայք, ծերք եւ տղայք, 5
կարգաւորք եւ աշխարհականք, ոմանք իշով,
այլք ձիովք, այլք հետիոտս. եւ իրիկունն հա-
սանեն Սէյտի Մուսան, ուր Խաբշիկ Մովսէս
ճգնէր։ Եւ անդ կայ քարէ այր մի եւ մէտրա-
սա մի. եւ հոր մի հոտած ջրով. անդր իջաք։ 10
Եւ քանզի մեծ չող էր՝ տապեցաք զօրն ի բուն
սաստիկ տապոյ արեգական. եւ սախիքն ջուր
ածէին թասով երկու-երկու մանդր, զի Արա-
պիստան ամէն մանդր կ՝անցնի. եւ մեք ջուրն
զնէաք, ըմպէաք եւ առաւել ծարաւէաք եւ 15
պապակէաք, մինչեւ ցամաքեցան քիմք մեր
եւ լեզուք չորացան, զի ջուրն զառն էր եւ
աղի։ Անդ տեսաք Սողոմայ երկիրն, որ քա-
ղինք իրրեւ զփայտ կ՝այրէին եւ կերակուր
կ՝էփէին. եւ էրածն սեւանայր, իրրեւ զդոր- 20
ծելի զառնայր։ Անդ տեսաք եւ զԾոմն անի-
ծած, յորմէ դեռ ծուխ ելանէր եւ զարշ հոտ։
Այլ եւ (տեսաք) քաղաքն Երիքովի. եւ իջեւանք
կալաք ի Բեթփագէ եւ ի Բեթանիայ, ուր Տէրն
զՂազարոս յարոյց. մտեալ աղօթեցաք։ Եւ 25
այլ յոլով ուխտատեղաց հանդիպեալ՝ երկրորդ
օրն հասաք ի Յորդանան գետ։ Եւ մերձ գե-
տին էր Փորձութեան լեառն եւ վանքն Յով-
հաննու, ուր աղօթէր, եւ տեղն ուր մկրտէր
եւ առջին վանքն եւ այլ տեղիք բազում անա- 30
պատուորաց։ Եւ գետն էր մեծ եւ սրընթաց,

7 այլ։ — 18 անտ։ — 24 բեթփաքէ։ — 26 ոլով։
— 31 սրընթաց։